ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.17. Հյուսիսային Եվրոպա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը

• • •

Տարածաշրջանի կազմում են ԽՍՀՄ փլուզման արդյունքում անկախացած նախկին բալթյան հանրապետությունները, որոնք էապես հաղթահարել են անցումային տնտեսության դժվարությունները և արդեն տնտեսական մի շարք ցուցանիշներով մոտենում են զարգացած երկրներին: Տարածաշրջանի ՏԱԴ-ի առավելություններից մեկն այն է, որ գտնվում է Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի միջև ծովային և օդային ամենակարճ ուղիների վրա: Բոլոր երկրներն էլ ՆԱՏՕ-ի անդամ են, բացի Շվեդիայից, որի անդամակցությանը խոչընդոտում է Թուրքիան: Ինչու՞:

Հյուսիսային Եվրոպայի պետությունների ձևավորումն ու պատմական զարգացումը հարթ չի ընթացել: Հարևան ժողովուրդները հաճախակի պատերազմել են միմյանց հետ: Անգլիան XVII–XX դարերում գաղութներ ուներ բոլոր աշխարհամասերում, Ֆինլանդիան շուրջ հինգ դար Շվեդիայի տիրապետության տակ է եղել: Երկրորդ աշխարհամարտի սկզբում ԽՍՀՄ-ին (1940թ.) բռնակցվեցին Բալթյան երեք պետությունները, որոնք կես դար մնացին նրա կազմում:

• • •

Հյուսիսային Եվրոպայի երկրներում *բնակչության բնական աճը* խիստ նվազել է, տարեկան՝ 0,2%, իսկ Շվեդիայում և բալթյան երեք պետություններում՝ բնական աճ չկա: Այս երկրները «ժողովրդագրական ձմռան» փուլում են:

Դանիայի, Նորվեգիայի և Իսլանդիայի ***բնակչության ազգային կազմը*** միատարր է: Մեծ Բրիտանիայում ազգային փոքրամասնություններից գերակշռող են շոտլանդացիները, իռլանդացիները, Շվեդիայում՝ ֆինները, իսկ Ֆինլանդիայում՝ շվեդները: Մինչև վերջերս Բալթյան պետություններում մեծ էր ռուսների բաժինը, սակայն նրանց թիվը զգալիորեն նվազել է: Ինչու՞:

Դրա փոխարեն մեծանում է հրեաների և լեհերի բաժինը:

• • •

Տարածաշրջանի երկրներից ամենախտաբնակը Դանիան է՝ 128 մարդ/քկմ, ամենանոսր բնակեցվածը՝ Իսլանդիան՝ 3 մարդ/քկմ:

Մեծ Բրիտանիայում ավելի քան 30 հազար հայ է ապրում: Հայ-անգլիական առնչությունները վերաբերում են XIII-XIV դարերին՝ խաչակրաց արշավանքների ժամանակներին: Առաջին հայ համայնքները ստեղծվել են XIX դարում՝ Լոնդոնում, ապա և Մանչեսթրում:

Հյուսիսային Եվրոպայի բոլոր երկրներն աչքի են ընկնում որակյալ աշխատուժով և բարձր գիտական ներուժով:

• • •

Օգտակար հանածոներից տարածված են ածուխը (Մեծ Բրիտանիա, Նորվեգիա), երկաթի և գունավոր մետաղների հանքաքարերը (Շվեդիա, Նորվեգիա), ուրանը: Ֆինլանդիայում շատ են գրանիտի և կվարցի, երկրների մեծ մասում՝ տորֆի պաշարները: Մեծ Բրիտանիան և Նորվեգիան օգտագործում են Հյուսիսային ծովի շելֆի նավթի և բնական գազի պաշարները: Բալթյան երկրներում լայն տարածում ունեն այրվող թերթաքարի, սաթի, շինանյութերի, հատկապես՝ գրանիտի պաշարները, նաև հանքային ջրերը և բուժիչ ցեխերը:

• • •

Հյուսիսային Եվրոպայի երկրները արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար ունեն միանգամայն տարբեր բնառեսուրսային հնարավորություններ: Արդյունաբերության զարգացման բնառեսուրսային ներուժն ավելի մեծ է (ինչու՞):

• • •

Բնառեսուրսային առումով մեծ է հին, քայքայված, օգտակար հանածոներով հարուստ Սկանդինավյան լեռների դերը, որից սկիզբ առնող կարևոր և արագահոս գետերն էլ հարուստ են ջրաէներգետիկ պաշարներով:

• • •

Բնական լանդշաֆտների անբաժան մասն են ձահիճներն ու սառցադաշ-տային ծագման հազարավոր լճերը: Բավական է ասել, որ լանդշաֆտային այս բաղադրիչներն են ընկած Ֆինլանդիայի անվան հիմքում: Նրանք իրենց երկիրը անվանում են **Սուոմի՝** լճերի և ճահիճների երկիր: Մոտավոր հաշ-վարկներով այստեղ կա 60000 լիճ: